




ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈՒՈՐԻ ՀԱՄԱՐ

ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ (VBM) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

ԻՆՉ ՏԵՍՔ ՈՒՆԻ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ

▲ VBM (Vote By Mail) քվեաթերթիկներն ամբողջ երեսով մեկ գրված քվեարկության քարտեր են, որոնք պարունակում են քվեարկության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Ընտրության չափից և ընտրաթերթիկի վրա մրցույթների քանակից կախված՝ VBM փաթեթը կարող է պարունակել մի քանի քարտեր՝ դիմացի և հետևի մասերում նշված մրցույթներով:

Եթե դուք ընտրական նյութերը պահանջում եք անգլերենից բացի մեկ այլ լեզվով, Դուք VBM քվեաթերթիկը ստանալու եք պահանջված լեզվով:



ԻՆՉ ՏԵՍՔ ՈՒՆԻ ՆՈՐ VBM ԾՐԱԸՐԸ

▲ VBM ծրարները, որոնք թողարկվում են Los Angeles վարչաշրջանի գրառումներ պահողի գրասենյակի կողմից, դեռևս կունենան դրոշմ, որտեղ կարդացվելու է՝ պաշտոնական ընտրության փոստ, որը լիազորված է ԱՄՆ փոստային ծառայության կողմից: Բացի այդ, դուք կտեսնեք վարչաշրջանի կնիքը բոլոր ծրարների վրա: Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք VBM-ի մասին, խնդրում ենք զանգահարել 1-800-815-2666, տարբերակ 2:

ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԽՆԴԻՐԵԼ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ԱՆՎԼԵՐԵՆԻՑ ԲԱՑԻ ԱՅԼ ԼԵԶՎՈՎ

▲ Մեկ այլ լեզվով ընտրական նյութերը խնդրելու համար զանգահարեք Los Angeles վարչաշրջանի Գրառումներ պահողի բազմալեզու սպասարկման բաժին՝ (800) 815-2666 հեռախոսահամարով, տարբերակ 3:

ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿ ԽՆԴԻՐԵԼ

▲ Դուք կարող եք VBM քվեաթերթիկ խնդրել առցանց՝ LAVote.net հասցեով կամ լրացնելով և վերադարձնելով նմուշ քվեաթերթիկի գրքույկի հետևի կազմը Los Angeles վարչաշրջանի գրառում պահողի գրասենյակ:

ԱՐԴՅՈՒՔ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԳԱՐՁՆԵՄ ԲՈՒՈՐ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՔԱՐՏԵՐԸ, ՈՐՊԵՍԶԻ ՀԱԾՎԱՐԿՎԵՆ ԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

▲ Ոչ, դուք կարող եք վերադարձնել միայն այն քվեաթերթիկների քարտերը, որոնց համար Դուք ցանկանում եք քվեարկել: Հիշեք, որ Los Angeles վարչաշրջանի գրառում պահողի գրասենյակը կհաշվարկի միայն այն քարտերը, որոնք դուք վերադարձնեք: Բոլոր քվեաթերթիկների քարտերը չվերադարձնելը, միևնույն է, չի ազդի այն քարտերի վրա, որոնք դուք վերադարձրել եք:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ԵԹԵ ՎՆԱՍԵԼ ԿԱՄ ԿՈՐՑՐԵԼ ԵՄ ԻՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՔԱՐՏԵՐԸ

▲ Եթե Դուք վնասեք կամ կորցնեք մեկ կամ մի քանի քվեաթերթիկի քարտեր, դուք կարող եք փոխարինող նյութեր խնդրել ընտրությունների օրվանից մինչև 7 օր առաջ: Եթե փոխարինում խնդրեք, մենք ձեզ լրիվ նոր VBM փաթեթ կուղարկենք: Եթե ընտրությունների օրվան 7 օրից պակաս է մնացել, խնդրում ենք զանգահարել մեր գրասենյակ (800) 815-2666, տարբերակ 2:





ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

ՓՈՍՏԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ (VBM) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

ՔՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ VBM ՆՅՈՒԹԵՐԻ ԻՄ ԱՌԱՋԻՆ ՓԱԹԵԹԸ, ԵԹԵ ԽՆԴՐԵԼ ԵՄ ՆՈՐ ՓԱԹԵԹ

▲ Գրեք «Void» (Անվավեր) բոլոր հին նյութերի վրա և թափել աղբը:

ՔՆՉ Է ՊԱՏԱՀՈՒՄ, ԵԹԵ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԾՐԱՐԻ ՎՐԱ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ ԿԱՍ ԱՅՆ ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԱՐԽԻՎՈՒՄ ԳՏՆՎՈՂԻ ՀԵՏ

▲ Los Angeles վարչաշրջանի գրառում կատարողի գրասենյակը փոստով ձեզ կուղարկի չստորագրված քվեաթերթիկի երդման ձև, որպեսզի լրացնեք ու ստորագրեք: Դուք ընտրությունների օրվանից հետո կունենաք մինչև 8 օր՝ ձևաթուղթը մեր գրասենյակ վերադարձնելու համար, որպեսզի ձեր քվեաթերթիկը հաշվարկվի:

ԿԱՐՈՂ ԵՄ ՀԵՏԵՎԵԼ ԻՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՀԵՏՔԵՐԻՆ

▲ Այո, ինչպես և մեր ներկա VBM գործընթացում, քվեարկողները կարող են առցանց հետևել իրենց քվեաթերթիկների հետքերին LAvote.net կայքէջում:

ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԻՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ

▲ Լրացված VBM քվեաթերթիկը կարող եք մեզ վերադարձնել ԱՄՆ փոստային ծառայության (USPS) միջոցով՝ կցելով անհրաժեշտ քանակությամբ նամականիշներ: Եթե կցանկանաք այն ուղղակի մեզ հանձնել, դուք կարող եք այն թողնել հանձնման որևէ վայրում կամ քվեարկության որևէ վայրում: Ինչ ձևով էլ այն վերադարձնեք, մի մոռացեք ստորագրել ու թվագրել ձեր վերադարձի ծրարը:

ԵՐԲ ԿՍԿՍՎԵՆ ԱՌԱՔՎԵԼ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ

▲ Մենք սկսում ենք առաքել VBM քվեաթերթիկները ընտրությունների օրվանից 29 օր առաջ: Այն քվեարկողներն, ովքեր գրանցվել են որպես մնայուն VBM, կսկսեն ստանալ իրենց քվեաթերթիկները առաքվելուց մի քանի օր հետո: Մեկ անգամյա խնդրանքներն ամեն օր կմշակվեն և պետք է ստացվեն խնդրանքից մի քանի օր հետո:

ԻՆՉԻ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՄ VBM ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

▲ VBM քվեաթերթիկները պետք է լրացվեն սև կամ կապույտ թանաքով:

ՈՐՔԱՆ ՆԱՄԱԿԱՆԻՇԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՄ՝ USPS-Ի ՄԻՋՈՑՈՎ ԻՄ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

▲ Ընտրությունների մեծամասնության դեպքում, ձեզ անհրաժեշտ է մեկ առաջին կարգի նամականիշ՝ ձեր քվեաթերթիկը հետ ուղարկելու համար: Մենք ձեր VBM փաթեթում կներառենք լրացուցիչ տեղեկություններ և հրահանգներ, եթե լրացուցիչ նամականիշ պահանջվի:

ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ ՆՈՐ VBM ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

▲ Այցելեք VSAP.lavote.net՝ նոր VBM փորձառության մաս կազմող հետազոտության ու նախագծի մասին ավելին իմանալու համար:

